Ա. Պ. ՉԵԽՈՎ

ՎԱՆԿԱ

ՊԵՏՀՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ 1937

Ա. Պ. ՉԵԽՈՎ

ՄՈՍԿՎԱ 1961 թ.

ՎԱՆԿԱ

Թարգմ. Հ. Տ. ԱՎԱԳՅԱՆ

Նկարներ
Ա. ԴԱՎԻԹՈՎԱՅԻ

7089 791
A II 23938

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1937



ՓՈՔՐԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՄԻՋԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Պատ. խմբագիր՝ [redacted]
Տեխ. խմբագիր՝ Լ. Ոհանյան
Սրբագրիչ՝ Ի. Նշանյան

Գլավլիտի լիազոր Կ—4483, հրատ. 3937
Պատվեր 1564, տիրաժ 3000
Պետհրատի տպարան, Երևան, II Կնունյանցի, 4

Վանկա Ժուկովը, իննը տարեկան մի տղա, վորին յերեք ամիս առաջ տվել եյին իբրև աշկերտ կոշկակար Ալյախինի մոտ, ծննդյան նախընթաց գիշերը չեր պառկում քնելու։ Սպասելով, մինչև տանտերերն ու աշկերտները գնացին յեկեղեցի, նա վերցրեց տանտիրոջ պահարանից թանաքով սրբվակը, ժանգոտած գրչածայրով գրչակոթը և դնելով իր առջև թղթի մի ճմլված թերթ, սկսեց գրել։

Նախքան առաջին տառը դուրս բերելը, նա մի քանի անգամ յետ նայեց դեպի դրռները ու լուսամուտները, թեք նայեց մութ սրբապատկերին, վորի յերկու կողմը ճգվում եյին դարակներն իրենց կաղապարներով, և ընդհատ-ընդհատ հոգոց հանեց։

Թուղթը պառկած եր սեղանի վրա, իսկ նա ինքը ծունկ եր չոքել նստարանի առջև։

«Սիրելի պապիկ, Կոնստանտին Մակա՛րիչ,— գրում եր նա.— Անա գրում եմ քեզ նամակ։ Շնորհավոր ծնունդ յեվ մկրտություն, ցանկանում եմ քեզ ամեն ինչ տեր աս-

տրծուց: Ցես՞վոչ հայր ունեմ յեվ վոչ մայր, սիայն դու յես մնացել ինձ»:

Վանկան աչքերը դարձրեց մութ լուսամուտին, վորի մեջ յերևում եր նրա մոմի արտացոլումը, և պարզ պատկերացրեց իրեն իր պապ Կոնստանտին Մակարի՛չին, վոր ծառայում եր պարոն Ժիվարյանների մոտ՝ իբրև գիշերային պահակ: Նա մի վաբրիկ ըստրիկ բայց չափազանց շարժուն, ճարպիկ ծերուկ ե, 65 տարեկան, անվերջ ծիծաղող յերեսով և հարբած աչքերով: Ցերեկը նա քնում եր ծառաների խոհանոցում կամ զվարճախոսում խոհարարուհիների հետ, իսկ գիշերը, լայնարձակ քուրքի մեջ փաթաթված ման ե գալիս ագարակի շուրջը և թլխկթլխկացնում թակիչը: Նրա յեռևից, գլուխները կախ գցած, քայլում են պառավ Կաշտանկան և շնիկ Վյունը,*) վորին, շնորհիվ նրա սև գույնի և աքիսի նման յերկար մարմնի, այդպես եյին անվանում: Վյունն անսովոր կերպով համեստ ե և սիրալիր, միևնույն հաճոյանքով նայում ե թե յուրայիններին և թե ուրիշներին, բայց վստահություն չի վայելում: Նրա համեստության և խոնարհության տակ թաքնված ե իսկական ճիզվիտական մի նենգություն: Վոչ վոք նը-

*) Վյուն — բարակ, շարժուն՝ ձուկ:



Նա ծունկ եր չոքել նստարանի առջև.

բանից ավելի լավ չի կարողանում հարմար ժամանակ գաղտագողի մոտենալու բռնելմեկի վոտից, մտնել սառցատունը, կամ գողանալ գյուղացու հավը։ Արդեն քանի անգամ ջարդել էին նրա յետևի վոտքերը, մի յերկու անգամ կախել էին նրան, ամեն շաբաթ ծեծում, կիսամեռ էին անում, բայց նա միշտ կենդանանում էր։

Հիմա, յերևի, պապը կանգնած է դարպասի մոտ, աչքերը կկոցած նայում է գյուղական յեկեղեցու վառ կարմիր լուսամուտներին և, թփթփացնելով թաղյակները, զվարճախոսում է ծառայող աղամարդ'կանց և կանանց հետ։ Նրա թակիչը կապված է գոտուց։ Նա ձեռքերը խփում է իրար, կուշ է գալիս ցրտից և, ծերավարի հռհռալով, կճմթում է մերթ աղախնին, մերթ խոհարարուհուն։

— Մի քթախոտ չքաշե՞նք,— ասում է նա, դեմ անելով կանանց իր քթախոտի ամանը։

Կանայք քաշում են ու փռշտում։ Պապն աննկարագրելի հրճվանքի մեջ է ընկնում, ծիծաղում է ուրախ ծիծաղով ու բղավում՝

— Պոկի՛ր, սառել, կպել է։

Շներին էլ են քթախոտ տալիս քաշելու։ Կաշտանկան փռշտում է, վոլորում դունչը և, վիրավորված, քաշվում է մի կողմ։ Իսկ Վյու-

նը ծանրախոհությունից չի փոշտում և պոչն ե թափ տալիս։ Իսկ յեղանակը հիանալի յե։ Ողը հանգիստ ե, թափանցիկ ու թարմ։ Գիշերը մութ ե, բայց յերևում ե ամբողջ գյուղն իր սպիտակ տներով և ծխնելուղներից դուրս յեկող ծխով, յեղյամով արծաթազոծված ծառերը, ձյունի հյուսերը։

Ամբողջ յերկինքը ծածկված ե ուրախ թարթող աստղերով, և Հարդգողի ճանապարհը յերևում ե այնքան պարզ, կարծես այն լվացել են ու ձնով տրորել տոնի համար...

Վանկան հոգոց հանեց, թաթախեց գրիչը թանաքի մեջ և շարունակեց գրել։

«Իսկ յերեկ ինձ մի լավ դրին։ Վարպետը մազերիցս քաշ տվեց ինձ բակն ու լավ ուսացրեց դայիշով՝ նրա համար, վոր յես նրանց յերեխին որորում եյի ու ել չիմացա, թե վոնց քնել եյի։ Իսկ ես շաբթին աղջիկ-պարոնն ինձ ձուկը տվեց. վոր մաքրեմ, յես պոչից սկսեցի մաքրել, նա ել վերցրեց ձուկն ու են ձկան դունչը դեմ արավ իմ մռթին։ Աշկերտները ձեռ են առնում ինձ, ուղարկում են գինետուն, վոր արաղ առնեմ յեվ ասիպում են գողանալ տիրոջս վարունգները, տերս ել ծեծում ե ստի ուզածին պես։ Իսկ ուտելու բան ել չկա։ Առավոտը տալիս են մի քիչ հաց, հաշին քաշովից բանից յեվ յերեկոյան ել՝ եյի հաց, իսկ թեյ կամ թե կերակուր, իրենք տանտերերն են խժռում։ Ինձ ել ասիպում են, վոր պիտի հաշտում քնեմ, հենց վոր նրանց յերեխեն ել լաց լինի, ել իսկի չեմ քնում, յես եմ որորոցն որորում։ Սիրելի պապիկ, են ասծու սերին, տար ինձ եստեղից գյուղ, ել իսկի ճար ու հնար չունեմ... Կարոտով բարեվս քեզ, վոս-

քիդ հողն ըլնեմ յեվ մինչի մահս կաղոթեմ առծուն, տար ինձ եստեղից, թե չե կմեռնեմ ..»:

Վանկան ծռմռեց բերանը, տրորեց աչքերն իր սև բռունցքով ու հեծկլտաց։

«Ցես քեզ համար թուքուն կտրորեմ, — շարունակեց նա, — առծուն կաղոթեմ, իսկ թե վոր մի բան յեղավ, դնիսիր ինձ, վոնց վոր կուզես: Թե վոր կառծում ես, թե ինձ գործ չկա, յես ել քրիստոսի սերին խնդիրք կանեմ գործակատարներին, վոր կոշիկ տրբեմ կամ թե Ֆեդկայի տեղ կգնամ հովվի ոգնական կլինեմ: Պապի՛կ ջան, ել հար-հնար չկա, մահ ե իսկական: Ուզեցի վոր վոտով փախչեմ գլուղը, են ել կոշիկ չկա, ցրտից եմ վախենում: Իսկ վոր մեծացա, ես բանի համար քեզ կկերակրեմ ու չեմ թողնի վոր մեկը քեզ դիպնի, թե վոր մեռար ել, հոգուդ հանգստության համար աղոթք կանեմ, վոնց վոր իմ Պելագե ազու համար:

«Իսկ Մոսկվան մեծ քաղաք ե: Տները դիփ աղաներին են.: Ձիեր ել շատ կան, վոչխար ել չունեն, իսկ շրները շատ են: Եստեղ յերեխեքը ասդով ման չեն գալիս, ժամումն ել չեն թողնում մարդ յերգի, մի հես ել յես տեսա խանութում, լուսամուտին դրած կարթեր են ծախում կարթաթելն ել վրան, ամեն տեսակի ձկան համար, շատ ել լավն են, ենպես սի հատ ել կարթ կա, վոր սի փրանոց լոքո կքաշի: Ցեվ ենպես ել խանութներ եմ տեսել, վորտեղ ամեն տեսակի հրացաններ կան, վոնց վոր մեր տղան ունի, ենպես վոր մեկը հարյուր մաներ ել կարժենա... Իսկ մսի խանութներում ե՛լ ցախաքոր, ե՛լ կաքավ, ե՛լ նապաստակ. իսկ վորտեղ են դրանց խփում, եդ մասին ենտեղ նստողները բան չեն ասում:

«Պապի ջան, իսկ յերբ աղաների տանը տոնածառ ըլնի ճվերներով, վերցրու ինձ համար մի վոսկեջրած ընկույզ ու իմ կանաչ սնդուկի մեջը ռիր: Ուզիր ուիոուդ Ոյգա Իգնատեվնայից, ասա, Վանկայի համար ե»

Վարպետը լավ ուտացրեց ինձ դայիշով։

Վանկան ջղաձգորեն ախ քաշեց ու նո-
րից աչքերը հառեց լուսամուտին։ Նա հի-
շեց, վոր աղաների համար միշտ պապն եր
գնում անտառ տոնածառ բերելու և իր հետ
տանում եր իր թոռանը։ Ինչ մի ուրախ
ժամանակ եր։ Պապն ել եր ճքճքում, սառ-
նամանիքն ել եր ճքճքում, և, նրանց աչք
աալով, Վանկան ել եր ճքճքում։ Պատահում
եր, վոր նախ քան տոնածառը կտրելը, պա-
պը ծխում է ծխամորճը, յերկար քաշում
է քթախոտը, ու ծիծաղում մրսած Վանյու-
շայի վրա... Յեղյամով պատած յերիտասարդ
յեղևնիները կանգնած են անշարժ և սպա-
սում, թե նրանցից վորը պիտի մեռնի։ Վոր-
տեղից վո՛ր է, ձյունի վրայով նետի պես
թռչում է նապաստակը... Չի լինի, վոր պա-
պը չկանչի՝

— Բռնի՛ր, բռնի՛ր... բռնի՛ր։ Այ, դու պո-
չատ սատանա։

Կտրած տոնածառը պապը քաշ եր տա-
լիս աղայի տունը, իսկ ենտեղ սկսում եյին
զարդարել ծառը... Ամենից շատ չարչարվում
եր որիորդը — Ոլգա Իգնատևնան, Վանկայի
սիրելին։ Յերբ դեռ կենդանի յեր Վանկայի
մայրը Պելագեն և ծառայում եր աղաների
մոտ իբրև աղախին, Ոլգա Իգնատևնան կե-

Պապն էր գնում անտառ տոնածառ բերելու և իր հետ տանում էր իր թոռանը։

բակրում էր նրան շաքարեղենով և պարապ ժամանակը սովորեցրեց նրան կարդալ, գրել, հաշվել մինչև հարյուրը և նուշիկակարգին պարել։ Յերբ Պելագեն մեռավ, վորբ Վանկային տարան ծառաների խոհանոցը՝ պապի մոտ, իսկ խոհանոցից Մոսկվա, կոշկակար Ալյախինի մոտ։

«Արի եստեղ, պապի ջոն,— շարունակեց Վայնկան,- Քրիստոսի սերին աղաչում եմ, տար ինձ եստեղից։ Խղճա դու ինձ, թվառ վորբիս, թե չե ինձ բոլորը դրնֆում են, ենպես ել ուտել եմ ուզում, ենպես ել ձանձրալի յե եստեղ, ել ասելու չի, միշտ լաց եմ ըլնում։ Են ոռն ել վարպետը կաղապարով գլխիս խփեց, ենպես, վոր վեր ընկա ու հազիվ խելս գլուխս յեկավ։ Իմ կյանքը հո կյանք չի, շնից ել վատ եմ... Մեկ ել վոր բարեվում եմ Ալյոնային, քոռ Յեգորկային յեվ կատապսին, համ ել իմ գարմոնը մարդու չտաս։ Մնամ քո թոռ՝ Իվան Ժուկով. պապի ջան, արի՛»։

Վանկան չորս տակ ծալեց գրված թուղթը և դրեց ծրարի մեջ, վոր յերեկ էր առել մի կոպեկով... Մի փոքր մտածելով, նա թաթախեց գրիչն ու գրեց հասցեն՝

ԴԵՊԻ ԳՅՈՒՂ ՊԱՊԻՆ

Հետո քորեց իրեն, միտք արեց ու ավելացրեց՝ «Կոնստանտին Մակարիչին»։ Գոհ նրանով, վոր նրան չխանգարեցին գրել, նա դրեց գդակը և, չգցելով վրան իր քուրքա-

Վանկան կոխեց թանկագին նամակը ճեղքի մեջ։

քիկը, ուղղակի շապկանց դուրս վազեց փողոց...

Մսի խանութի վաճառողները, որոնց նա հարցրել էր նախընթաց օրը, ասել էին նրան, որ նամակները զցում են փոստի արկղները, իսկ արկղներից ցրվում են ամբողջ աշխարհը փոստային կառքերով, որոնք քշում են հարբած կառապանները և որոնք ունեն զրնգան զանգակներ։ Վանկան վազեվազ մոտեցավ առաջին փոստարկղին և կոխեց թանկագին նամակը ճեղքի մեջ...

Քաղցը հույսերով տարված, նա մի ժամ հետո պինդ քնած էր... Նա յերազում տեսավ վառարան։ Վառարանի վրա նստած է պապը, բոբիկ ոտքերը կախած նեբքև, և կարդում է նամակը խոհարարուհիներին... վառարանի մոտ ման է գալիս Վյուռնն ու խաղացնում պոչը...

ՀԱՅՈՒ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՏՈՒՆ ՍԵՆՏՍԼ
ԳՐԱԴԻՏ ԷՊՊՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0002793

172

064.

ԳԻՆԸ 60 կոպ.

Ա II
23938

А. П. ЧЕХОВ
ВАНЬКА
ГИЗ ССА ЕРЕВАН

Госиздат
Ереван 1940 г.